ԼԱՊՏԵՐ ԴԻՈԳԻՆԵԱՆ

ԼԱՊՏԵՐԻ շրջանը 60 օրինակէ կը բաղկանայ։
Շրջանին գինն է դահեկան 40
Կիսաշրջանին » 25
Գաւառաց համար » 30

Իւրաքանչիւր օրինակի գինն է փարայ , 30
Նամակ կամ ո՛ և է գրութիւն պէտք է ուղղել
առ. Տնօրէն և Տէր Արամ Աչգեան ի Պօլիս
Սիւմպիւլլիւ խան վարի յարկ թիւ 35

Ա. ՏԱՐԻ Ա. ՇՐՋԱՆ — 1884 ՕԳՈՍՏՈՍ 12 — ԹԻՒ 11

ԼՐԱԳԻՐՔ եւ ՀԱՆԴԻՍՔ

Ա.

ԱՒԵՏԱԲԵՐ

Կը թարգմանի աւետիս բերող , և է լրագիր , և է Ս. Գիրք , և է քարոզ . մա՛ նմանիր այն ազգային թերթերուն որ գըլուխ կ'երցնեն բնական օրինաց դէմ , ուրախանալու աշխարհի վրայ , ինչպէս ամեն բան , որպէս ծնելու , այնպէս մեռնելու և արդիւնաւորելու վիճակի մէջ է , հայերէն ազգային թերթերն թէպէտ կը մեծնան բայց չե՛ն արդիւնաւորիր , հակառակ այն Աստուածաշունչ հրամանին որ կըսէ , «Աճեցէք և բազմացարուք ։ Աւետաբեր կամ բերաւետ , վանկադարձութեան օրինօք , ծնած է կծնի և պիտի ծնի տակաւին զաւակներ , մանկանց Աւետաբերը , մեծ Աւետաբերին , որ մեծ Քաղաքականները կը կարդան , թոռն է , Տաճկերէն Աւետաբերը այդ պզտիկին հայրը , Գաւառաբերէնը անոր եղբայրը , այսինքն մանկանց Աւետաբերին հօր եղբայրը , Ցունարէն Աւետաբերը մեծ Աւետաբերին սիրունիկ քոյրը , զոր ամուսնացնելու համար այս օրերս ամբողջ Աւետաբերական ընտանիքն յուզման մէջ է , Աստուած տար որ շնորհքով բանի մը հանդիպէին ։

Այո՛ Ընդհանուր Աւետաբերներն՝ իբրեւ հարազատ անդամակիցք մեծ Աւետաբերին՝ միշտ անոր բերնէն կխօսին , զոր օրինակ՝ եթէ մեծ Աւետաբերը «Ծննդոց» էն արդասաւորութեան մասին գրուած մէկ հարուածն քաղէ ամենքը մէկէն կպօռան «Եղիցի՛» և արձագանքը կկրկնէ ամեն ջերմեռանդ Բողոքականի սրտին մէջ «Եղիցի՛ և եղիցի՛» ։

Աւետաբերներուն ձեւին վրայ գաղափար մը տալու համար ո՛չ երկայն կրնամք ըսել ո՛չ կարճ , ո՛չ միջակ ո՛չ անմիջակ , վասն զի քառակուսի են . եթէ «արառ» ըլլային՝ անշուշտ մեծ յարգ պիտի ունենային ։ Աւետաբերաց մէջ կգրեն մեղմաձայն և երկայնահասակ և կարճահասակ և միջահասակ ամերիկացիներ խառն , հայեր ալ

կգրեն սատնց մէջ, չատեր չեն կրնար որոշել թէ ո՞ր գրուածն ամերիկացւոց և ո՞ր գրուածն "հայու է, եթէ գրուածոց մէջ դրոշին ձայնն ու տրտատանութիւնն լսելու բաղդը չնորհուած ըլլար մահկանացու մարդուն, անշուշտ անմիջապէս պիտի ճանչցուէր ամերիկացի խօսողը, որ հայերէն բառերն ամերիկեան անդղիերէնի հնչմամբ շեշտելով և երկարելով, և կարճեցնելով և լայնցնելով և խծդելով՝ մինչև անդամ մարդս երդում բնելու հարկին մէջ կ'ձգէ թէ իւր խօսածն հայերէն չէ՝, թէպէտ բարբարական մը սկզբունքին իսկոյն հակառակ եղած ըլլայ երդնուլ, ո՞ւր մնաց երդուընդրնելն։

Աւեստաբերներն կը յղացուին Պոյպլ Հաուզ, կծնին Ցակոբեան խան, և կը զարգանան ամեն Բաղոքական ընկերներու մէջ, Բաղոքական բամբիշներն և տիկիններ ճաշի ատեն ալ կկարդան զանոնք, քունի մէջ ալ, պարի ատեն ալ, գործի մէջ ալ, լոն նէ ալ, ինդան նէ ալ, սիրեն նէ ալ, ատեն նէ՝ ալ, ոտգ ինդիր ծադած է գիտնալ թէ մեռեալ Բաղոքականներն ալ կը կարդան։ Մեռնելէս անմիջապէս յետոյ՝ եթէ ներելի ըլլայ Լուսաւորչական հայու մը դանել զանոնք և աեսնուիլ անոնց հետ արքայութեան կեդրոնը՝ սուտջին գործս պիտի ըլլայ Բաղոքական մը դանել և այս հետաքրքրութիւնս յագեցնել։ օ՜հ, ինչ երջանկութիւն պիտի ըլլայ ինձ Աւեստաբերները կարդալ արքայութեան մէջ։

Աւեստաբերներուն նիւթոց վրայ, ձեւերուն վրայ և անոնց բաղոքականաց մէջ գտած պատոյն և արժանապատուութեան վրայօք խօսելիս յետոյ՝ հարկ է՝ ճշմարտութիւնը միայն խօսքի սահմանին մէջ չձգելու համար, և ըստ ինքս գործնականապէս հաստատելու վասն, (Դրարտարի օրինօք) պէտք կզգամք, մեր ներսիդին ամենէն խորին և անմատչելի դատաստանքն մէջ, ըստ ինքս գործնականապէս հաստատուելու, ընդունելով ատ Աւեստաբերաց այլ և այլ նիւթոց մէջ մեկ քարտուղարն։

ԿՐՕՆԱԿԱՆ

Ցէրը մեծ վտանգ կսպառնայ ամեն անոնց, որք բարիք չեն կամենար իրենց նմանեաց. պիտի կործանէ զանոնք, այո՛, պիտի կործանէ կրսեմ, և կկարծեմ ըստ ըլլալ թէ պիտի կործանէ։

Ցէրը պիտի կործանէ նաև զանոնք որ սուրբ օրերը խանութի կրանան և գործ կընեն, և սուրբ դիրքը կգոցեն, ամեն գործ միայն գործի օրերու մէջ ներելի է, որպէս ածուխը կրակարանին մէջ երկրի է, Ցէրը լոսած է առաքելոյն բերնով, որ հիւանդն է բանճար կերիցէ, և դուք հիւանդ էք հոգւով և բանճարի ատեն ալ ըլլալով՝ (կառնապիա) կուտէք։ վա՛յ ձեզ, վա՛յ ձեզ, ահա երրորդ անգամ ըլլալով կրսեմ, վա՛յ ձեզ։ . . . . . .

ԱԶԳԱՑԻՆ

Ցէրը Ամերիկայի ազգայնոց մէջ մեծ գործ ունեցած է այս օրերս, հայեր, գունդագունդ, Քրիստոնէութեան լոյսին ետևէն կը վազեն, բաղոքականք ալ անոնց առջևէն կը նստին բայց շատ վազելէն քրքալնած ըլլալով՝ յաւտի է ասել թէ բռնուած են հաղէն Ցէրը ապաշխարանք համարէ՝ զայս անոնց, աղօթիներ, եղբարք, անոնց համար անոնք կը նմանին այն կորուսեալ ոչխարին, զոր հովիւն գտնելով ուրախացաւ, մենք ալ իրաւունք ունիմք այսօր ուրախանալու, Ցէրը ուրախութիւնը չարդիլէր, ո՛ Ցէր, դու պահպանէ այս նորադարձ հաւատացեալներն, որ Հայ ազգին մէյմէկ փոքրանքներն չպիտի ըլլան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տէրը իր ամուր ձեռքով պաշտպանելով նոր աւետեաց երկիրը, Ամերիկան, զայն հիմա ամենահաստատուն վիճակի մը մէջ դրած է, որեւէ ելքէն տկարութենէն հիւսիսէն հարաւէն մութ ամպեր կ'սպառնան, բայց քանի որ Տէրն է անոր օգնականը, ո՛վ պիտի կրնայ վնասել անոր. Տէրոջը կամքին համաձայն նոր հրացաններ պատրաստուեցան որ Տէրոջը հպատակները պիտի ընեն ցիրուցան:

Տէրը կը յարուցանէ, ինչպէս գիտէք, երեւելի զօրապետներ: Տէրոջը կամքը առնելով՝ որոշուեցաւ շնորհակալութեան քուէ առաջարկել Գաղղիոյ հասարակապետութեան, որ այն ահարկու արձանը հաճեցաւ ընծայել Տէրոջը կամքով Միացեալ Նահանգաց, Տէրը օրհնէ զԳաղղիա:

ԳԻՏԱԿԱՆ

Տէրը ստեղծած է պլանիթը երկրին ծոցին մէջ, որ փորագրութեան կը ծառայէ, Տէրը ստեղծած է երկրին փորին մէջ հանքային ջուրերն, որ այնչափ օգտակար բուժման կը նպաստեն, Տէրը ստեղծած է երկրին ոտքին վրայ սօտան, որ այնչափ ամաններ և ճերմակեղէն մաքրելու կը գործածուի, նաև Տէրը ստեղծած է կայծակը որ մտնելով երկրին խորերը՝ իբր թէ մատնանիշ կը ցուցնէ երկրին մէջ եղած պիտանութիւն՝ հանքային ջուրերն, ոսկին և այլ ամեն հանքեր: Գալով թուաբանութեան՝ մէկ թիւը Աստուածային միութիւնը կը յայտնէ, երկուքը՝ Աստուածային միութեան երկրորդ անձնաւորութիւնը, երեքը՝ կը ներշնչէ երրորդութեան գաղափարը. Մնացեալ վեց թիւերն և մէկ զէրոն ածանցեալ կ'ըսուին, զորս մասնաւոր դասով մը պիտի սորվեցնենք ուրիշ առթիւ: Ու այժմ Տէրը յաջողէ մեզ որ այս մէկ դասն ալ ըմբռնեմք, և յաջորդներն ալ, որոց վրայ անշուշտ հետզհետէ պիտի խօսիմք, ըմբռնելու պատրաստուիմք, ամէն:

Հիմա Աւետարանիչներու մասին արուած տեղեկութիւններս կարծեմ կատարեալ կըլլայ՝ եթէ յիշենք նաև ծնողակի՝ թէ Աւետարանիչներուն ամերիկացի աշխատաւորաց այս անձնանուէր ջանքն կը վարձատրուի նիւթապէս՝ Տիրոջմէն պաշտպանեալ Միացեալ—Նահանգէն, և բարոյապէս՝ մեր ազգի հայոց, հիւրասիրութենէն:

Մենք ալ կը խնդրեմք Տէրոջմէն որ ինքն յաջողէ նոցա ջանքերն, լսէ մեր աղօթներուն, և բժշկութիւն պարգևէ այն նորադարձ հաւատացելոց հոգին, որ անշուշտ այժմ շատ կը նեղէ զիրենք:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ի՞նչ է գեղեցկութիւնը, կը հարցնէին օր մը Արիստոտել փիլիսոփային
— Այդ հարցումը պէտք է կոյրերուն ուղղել, պատասխանեց:

Ամեն մայր պարահանդէսի մէջ ծըլտեալ նստար մ'է:

Կինը սատանային գործին է:

Կինը կատարելագործեալ սատանայ մ'է:

Միւնոյն կրօնքէ եղող քահանայից նման կանանց մէջ ալ գաղտնի կապ մը կայ. թէպէտ նոքա կատեն զմիմեանս, բայց ի հարկին միմեանց պաշտպան են:

Ամուսնութիւնը միճակահանութիւն մ՚է ուր կերթան մարդիկ իրենց աղատութիւնը և կանայք իրենց երջանկութիւնը կորուսելու վտանգին մէջ դնել։

Կինը վայրենեաց մէջ գրաստ մը, Արևելեան ազգաց մէջ կահ մը իսկ Եւրոպացւոց քով երեսէ ելած չքացած մանուկ մ՚է։

Սէրը կանանց սրտին մէջ երգող թռչնիկ մ՚է։

Կինը աւելի դառն է քան մահը։

Տգեղ կին մը սա խօսքով միայն կըրնայ մխիթարուիլ. «Հոգւոյ գեղեցկութիւնը կը ջնջէ դիմաց տգեղութիւնը»

Հինրեկոս Դ. յոյժ կը սիրէր զՔաթէքին տը Ռօհան, պալատական օրիորդներէն մին. երեկոյ մը դաղտնաբար նմա հարցուց թէ՝ ուրկէ կընայ ոք իւր սենեակը երթալ.—

Տէ՛ր, պատասխանեց առաքինի կոյսը հեկեղեցւոյն մէջէն կարելի է սենեակս երթալ։

Լոդեր — Օրիո՛րդք մի մոռնաք այս պատասխանը, եթէ ձեզ ալ այսպիսի առիթ մը ներկայանայ, օգուտ քաղեցէ՛ք մեծաշ հանճարեղ պատասխանէն։

Նախանձը սիրոյ հետ ի միասին կը ծընի բայց շատ անգամ նորա հետ չը մեռնիր։

Պատուեցէք զկանայս, նոքա կը ցանեն երկնային վարդեր մեր կենաց ճանապարհին վրայ, կը կազմեն նոքա սիրոյ հանդոյցներ և ջնորհաց քօղին ներքին ոսկեթել ղդացմանց ծնունդ կուտան։

Հռովմայ մէջ երկու ամուսնացելոց դերեզմանին վրայ հետևեալը գրուած է։

«Կանգ ա՛ռ, ո՛ անցորդ, տես հրա՛շք մը.—աւտարիկ այր մը և իւր կինը որք բընաւ կռուած չեն իրենց կենաց մէջ։

Ի՞նչ բան կայ առաւել թեթեւ քան ղիեսատը.

— Փոչի.

Առաւել թեթեւ քան ղփոչի.

— Հով.

Առաւել թեթեւ քան ղհով.

— Կին.

Առաւել թեթեւ քան ղկին.

— Ոչի՛նչ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հայր մը իւր շռայլ որդւոյն.

— Թշուառակա՛ն, եթէ այդ ընթացքդ շարունակես, գիտցած եղիր որ ապագային թշուառութիւնը սիրոյ դայ և դուռդ պիտի զարնէ։

— Ի՛հ... ես ալ չեմ՝ բանար, կը պատասխանէ տղան։

***

Ամենարան մը իւր ճառախօսութիւնը աւարտելէն յետոյ քովինին կը հարցնէ թէ ինչպէս կրցաւ խօսիլ և թէ իւր ճառն ժողովրդեան կարեկցութիւնը գրգռելու յաջողեցա՞ւ մի....

— Շատ լա՛ւ, պատասխանեց քովինը, քու ճառդ ամենուն գութը չարժեց։

***

Բանաստեղծի մը կը հարցնեն թէ ինչո՞ւ օրէնքն տասն և չորս տարեկան պատանեաց մը թագաւորելու հրաման կուտայ իսկ նոյն տարիքը ունեցող աղջիկ մը անկարելի է որ ամուսնանայ։

— Որովհետև ժողովուրդ մը կառավարելը, կը պատասխանէ, աւելի դիւրին է քան կին մը։

***

Կանայք ընդհանրապէս չեն կրնար հանդուրժել իրենց տան մէջ գտնուող գեղեցիկ սպասուհիներէն։

— Անցեալ օր տիկին մը տեսնելով որ տան սպասուհին հագուելէն ու զարդարուելէն զատ ուրիշ հարկաւոր գործ մը ունեցած չունի ճամբեց զայն կշտամբելով։

— Երթաս բարեաւ, սպասուհին քու. հաս տեսած գործդ ես քեզմէ շատ աղէկ կրնամ կատարել։

***

Երկու գրագէտաց միջև.

— Է՜հ... այս օրերս ո՞ւր մնացեր ես, լրագրաց մէջ ալ ևս յօդուած չես գրեր կոր։

— Եղբա՛յր, ժամանակ չունիմ, երկու թատերգութիւն կշինեմ կոր. Տրովայ քաղաքին հրկիզութիւնը։

— Ի՞նչ կըսես. Ներկայացման ժամանակ եթէ վարագոյրները բռնկին նէ։

— Ես առաջուց քեզմէ յառաջ մտածեցի անոր համար է որ միւսն ալ ափեղեղեքական հրճեհին է։

ՊԱՐՈՆ ԿԻՐԱԿՈՍ

ՎԷՊ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ա.

Պարոն Կիրակոս՝ Գանտիլլի ծնած է հայ մօրմէ, հօրը վրայ գաղափար չունի, որովհետև տեսած չէ զինք, կը համարուի թէ մայրն ալ մոռցած է Կիրակոսին հօրը դիմագիծը, այնքան հապճեպով եղած է իրենց այն տեսակցութիւնն՝ որ ծընունդ տուած է Կիրակոսին։ Կիրակոս սակայն այժմ մեծ մարդ է, մեծ՝ տարիքով, մեծ՝ հասակաւ, մեծ՝ քիթով, մեծ՝ գաղափարներով, մեծ՝ ախորժով, և վերջապէս խօսքը կարճ կապելու համար, մեծ՝ մեծութեամբն. այնպիսի մեծադատիւ մարդ մը՝ ո՛ր ճամբով ալ եկած ըլլայ աշխարհ՝ նշանակութիւնը պատուաւորութիւն է, ու-տի՝ իրաց այս վիճակէն ձեռնեցնելով, որ վիճակներուն ամէնաղուորն է, կը գտնեմք թէ մարդու ծագման վրայ այսչափ խօսիլն իսկ տարօրինակութիւն է. ուրեմն դառնալով վէպիս բուն նպատակին՝ խօսքին թելը բռնենք, և շարունակենք բացատրել կամ գրել այս Կիրակոսին համար ինչ որ գիտենք, կամ ինչ որ գիտնալ կը կարծենք. ինչ որ գիտնալ չկը կարծենք, կըսեմ, որովհետև Կիրակոսի կենաց մէջ պատահած դէպքերուն ականատես վկայ եղած ըլլալու համար՝ պէտք էր այնպիսի պաշտօն մը յանձն առնել՝ զոր չէինք կրնար։ Այն դէպքերուն ու այն պաշտօնին վրայ նախնական գաղափար մը տալու համար, ու այժմ կարծեմ բաւական է ըսել սա թէ Պ. Կիրակոս երեւելի հեշտամոլ մ'է։

Բ.

Պ. Կիրակոս ծնած է դեկտեմբերի ամենացուրտ օրերէն մէկուն մէջ։ Թաւալա-

նը չպիտի յարգեմ. ի՞նչ պէտք է վատանդաւոր գործերու մէջ մտնել, և անոնց պատասխանատու մարդոց հետ պատիւ-կը պահանջեմի անարժելի հաշիւներ բանալ։ Գ. Կիրակոս ծնած է Դեկտեմբերի ամենացուրտ օրերէն մէկուն մէջ, բայց կարծեմ այս յուզքն անգամ մը ըսի. այո՛, կը յիշեմ, ո՛հ, ազնիւ ընթերցող, ներէ այս պակասութեանս, յիշողութիւնս չէ՝ այնպէս լաւ, որպէս արդի երիտասարդութեան վառվռուն յիշողութիւնն. այս ներողութիւնը խնդրելէս յետոյ, զոր կը յուսամ ստանալ, կանխաւ կը խնդրեմ նաեւ ներողութիւն այն ամէն այսպիսի պակասութեանց համար, զորս պիտի տեսնաս անշուշտ վիպիս չարունակութեանը մէջ։ Այո՛, Գ. Կիրակոս ծնաւ Դեկտեմբերի ամենացուրտ օրերէն մէկուն մէջ. բայց ո՛չ միայն Դեկտեմբերի ամենացուրտ օրերէն մէկուն մէջ ծնաւ Գ. Կիրակոս, այլ և ինքն անձնատուրութեամբն ծնաւ ցուրտ. սակայն այս երկու ցրտութեանց դաշնակցութիւնն երբէք չէր կրնար պատճառել այն երրորդ ցրտութիւնը՝ որ այսպիսի ծնունդներ կրնան հետերնին բերել. Կիրակոս տղեկին մտքը ուրախութեամբ ամուսնոյն վրայ վազելով՝ աղջկանը մանչ մը ծնիլը աւետեց. Ցակոբ աղան.- ա՛յս էր Կիրակոսին հաւատն անունը – առաջին անգամ թէպէտ շատերուս տղեկին ուրկէ գալուն վրայ, սատակագոյն ցուրտին պատճառաւ թէ՛ դռները և թէ՛ պատուհանները ամրապէս փակուած էին, սակայն շուտով սիմափելով՝ որսիմեռեւ կրնար խորհիլ թէ տեսակ մը նորածիններ կան որ ուրիշ ճամբով ալ կրնան գալ, ուրախութեամբ ընդունեց կնոջ աւետիսը, և երկուքը մէկէն վազելով դրկեցին նորածինը, որ այս արժանաւոր ընդունելութեան թթուած դէմք մը միայն ցոյց կուտար։

Նորածին մտրը, Լուսեայ, շուտով ողջերութեան, ամենաձանր հիւանդութենէն, առողջ ու առոյգ կիներ այս բարեբախտութիւնը ունին։ Երբ ոտքի ելաւ առաջին հոգն եղաւ այս սատանայի պարգեւ տրտաձին խնամք տանիլ, և փոխանակ զայն իրմէ հեռացնելու, որպէս կը պատահի այս տեսակ ծնունդներու, գրեթէ տալ զայն Աստուծոյ պարգեւ, ուսանի միրանալ տուտ. և անունը դրաւ Կիրակոս, այսինքն պտուղ ուռնարանայ. զարմանալի չմոռի Կիրակոս անուան թարգմանութի լինելը, հին անուններուն ամենքն ալ իրենց բացատրութիւններն ունին։

Ոսկրան քիչ առնէն Կիրակոսի մայրը մտքի և հաւ թողուցին զիանալի, որ իր անուան համաձայն, այսինքն՝ Արիւնալեզու, կամ ի հարկէ բնաւորութեանն ի դիպաց ոկսած էր աչերն բանալ այս մեղաւոր մօր անմեղ մանկան վրայ, և համբրել անոր ամէն մէկ ճիշերն, որոց մէջ կը կարդայինն «Հայրի՛ կս կո՛ղմ. . .»

(Շ-բառնակէն)

ԽՐԱՏՔ ԴԻՈԳԻՆԵԱՅ

Մարդ արշալի բարձր արժանեայ տէր ալ բլլայ, եթէ տան վառարանին անկիւնը նստի, ոչ ոք կը մնատէ զինքը։

Ժամանակը աշխարհի վրայ գտնուած ամենէն թանկագին գանձն է։

Ամենէն հանճարեղ մարդիկ՝ ամենէն աշխատասէրներն եղած են։

Ուղղութիւնը և արդարութիւնը զմեզ յաջողութեան կառաջնորդեն ամէն բանի մէջ։

Որչափ երկար ալ սպասենք յաջողու-

թեան, դարձեալ պարկեշտ ըլլալու է։

Հարստութեան փափաքը երկրորդական խնդիր մն է։

Ճշդութիւնը՝ բարեկիրթ մարդոց պարտքը և գործի մարդոց օրէնքն է։

Մոլ մարդը դժոգքի սիւներէն մէկն է։

Ժամանակը առակին աւելի կարժէ։

Աշխարհս ըզդհանրապէս նիւթական հարստութեանց փայլովը կը շողայ։

Հարստութիւնք՝ բնաւ բարոյական մեծութեան մը ապացոյցը չեն։

Ցոյն է որ կենաց դժուարութիւնները և դառնութիւնները կը քաղցրացնէ։

Կատարեալ թեան մը գոլութիւնը անհատից կոլովէն կախեալ է։

Մարդ մը բնութենէն որչափ օժտուած ալ ըլլայ, դարձեալ արուեստը խաղ մը չէ։

Զկոյ բարիք մը որ տրի սիրտ մը ուներնալն հաւասարի։

Աշխարհի մէջ դիպուածէն աւելի կամքը և յարատեւ դարձանէութիւնը օգտակար են։

Մեծ մարդն անանք չեն որ մանրահոգութիւնները կոնարդեն։

Ճշմարիտ յառաջդիմութիւնը յամր յամր կը կատարուի։

Եթէ աշխատինք ամէն դժուարութիւնք խաղալիք կրլլան մեզ համար։

Վատահութիւնը՝ մարդոց իրարու բրած մեծագանքներուն ամենէն գեղեցիկը և ամենէն մեծն է։

Արդի ընկերութեանց մէջ Կրէսոսի չարի հարուստներ կան։

Ուղղամտութեան հարուստները միշտ կարհամարհէ ծուլութիւնը։

Ցարգելի չեն անանք որոնք իրենց գերասէն դատ ուրիշ բնաւ արժանիք մը չունին։

Մերութեան առեն մարդ ընդհանրապէս ազատութեան կը փափաքի։

Մաքի և սրտի լաւ յատկութիւնները ամէն հարստութիւններէ լաւ կարժեն։

Խոհեմութիւն նախատեսութիւն և անձնուրացութիւն, առնտկան նկարագրի մը ճշմարիտ խորհրդանիշներն են։

Աւելի լաւ է կորսնցուցեալ ամէն բան և միայն պատիւը ազատել։

ԼՈՒԾՈՒՄՆ ՀԱՆԵԼՈՒԹԻՒՆ

Լապտերի 10 ԸՊ թուով հրատարակեալ հանելուկին լուծումը որ է ՈՒՐՈՒՅՑ առաջին անգամ լուծեց Պ. Մ. Մոգեան և հետզհետէ լուծեցին Ս. Զաքարեան, Ա. Զարիֆեան և Ց. Էքշեան Էֆէնտիք։

ՊԱՐԵՆԱՒՈՐ ՀԱՆԵԼՈՒԿ

Երկ. Եղբայր են տարրեր բնութեամբ
Բայց միշտ կը տեսնենք ջերմ սիրով երկուած
Որ մեր մարդկութեան իրենց միութեամբ
Կը ներկայանան իրարու մի Աստուած.
Աստուծին է ծերունի անձամբ,
Կը մեռնի կծնի ամենայն տարի
Նորա թէ մահուամբ ու թէ ծննդեամբ
Սիրտ մեծ ու փոքրիկ ցնծութեամբ է լի։
Միջնեկ եղբայրը մեր մոր արգանդէն
Ընթացան ընկերք է մեր մարմնին.
Կամիք հարցուցէք փոնցի մշակէն
Որպէս կրկ նա ցուեր գառնագին։
Թէ միջնեկին մի անդամը վերցնենք
Ու կրտսերի դլխին դնենք, և հակառակ-
Նորա կատաց՝ դլխիվայր ընկնիք
Յարգելի չեն անանք որոնք իրենց գերասէն դատ ուրիշ բնաւ արժանիք մը չունին։

Մերութեան առեն մարդ ընդհանրապէս ազատութեան կը փափաքի։

Մաքի և սրտի լաւ յատկութիւնները ամէն հարստութիւններէ լաւ կարժեն։

Խոհեմութիւն նախատեսութիւն և անձնուրացութիւն, առնտկան նկարագրի մը ճշմարիտ խորհրդանիշներն են։

Աւելի լաւ է կորսնցուցեալ ամէն բան և միայն պատիւը ազատել։

ԼՈՒԾՈՒՄՆ ՀԱՆԵԼՈՒԹԻՒՆ

Լապտերի 10 ԸՊ թուով հրատարակեալ հանելուկին լուծումը որ է ՈՒՐՈՒՅՑ առաջին անգամ լուծեց Պ. Մ. Մոգեան և հետզհետէ լուծեցին Ս. Զաքարեան, Ա. Զարիֆեան և Ց. Էքշեան Էֆէնտիք։

ՊԱՐԵՆԱՒՈՐ ՀԱՆԵԼՈՒԿ

Երկ. Եղբայր են տարրեր բնութեամբ
Բայց միշտ կը տեսնենք ջերմ սիրով երկուած
Որ մեր մարդկութեան իրենց միութեամբ
Կը ներկայանան իրարու մի Աստուած.
Աստուծին է ծերունի անձամբ,
Կը մեռնի կծնի ամենայն տարի
Նորա թէ մահուամբ ու թէ ծննդեամբ
Սիրտ մեծ ու փոքրիկ ցնծութեամբ է լի։
Միջնեկ եղբայրը մեր մոր արգանդէն
Ընթացան ընկերք է մեր մարմնին.
Կամիք հարցուցէք փոնցի մշակէն
Որպէս կրկ նա ցուեր գառնագին։
Թէ միջնեկին մի անդամը վերցնենք
Ու կրտսերի դլխին դնենք, և հակառակ-
Նորա կատաց՝ դլխիվայր ընկնիք

Մոլորեցեալ քաղաքի կուռեցեանք անուն
Ուր ծնաւ միակնակայ մեծ քաղաքագէտն,
Պարծանք Ֆրանսիոյ ազգին մեծանուն։

Ահա այս երեք տարբեր եղբայրներ միաս-
ցած ուժով
Յառաջ կը մղեն մարդկային ցեղեր մեծ
մեծ քայլերով
Դոքա մի բան են, որի համար շատ երի-
տասարդ սրտեր
Միշտ կը թափթփան որպէս կիթառի դաշ-
ըիկ թելեր։

ԱԶԳ

Նիւթոց առատութեան պատճառաւ ֆինիքսոյ ամուսնութիւնը, և Դիոգինեայ բառարանի շարունակութիւնը, յառաջիկայ թերթին մէջ պիտի գնենք, Նոյնպէս յառաջիկայ թերթին մէջ պիտի հրատարակենք նաեւ Իւսկիւտար Իճատիէի կողմէն եղող Ծերունի Սիմէոնի մի ապօրէն արարքն լաւ ըլլանալս կը փութանք բարի տեղեկացնել։

ՎԻՊԱԿ

Լապտերի Նախորդ թուոյն «Դիոգինեան բառարանի» վերջին բառը պէտք է կարդալ «Դիոգինէս» — խենդերուն բժիշկը, որ է Լապտերի Տէր և Տնօրէնն։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Պ. Տը Ս. Բիէռի ՀՆԴԿԱԿԱՆ ԽՐՃԻԹԸ որ ասկէ առաջ Ընտանիք հանդիսին մէջ մասառ մաս հրատարակուեցաւ, այս անգամ առանձին հրատարակեալ կը վաճառուի 'ի դէմ 2 դահեկան, Հայ գրավաճառաց քով։

Նոքա՝ որք գնահատած են տարդէն վէպիս օգտակարութիւնը, պիտի փութան անշուշտ ունենալ զայն։

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ Հանդէսը կը հրատարակուի երկու տարիներէ ի վեր խմբագրութեամբ Եղիա էֆ. Տէմիրճիպաշեանի, որ իւր նոր գաղափարներն կը ծաւալէ այն հրատարակութեամբ։

Տարեգինն է Կ. Պոլսոյ համար 4 մէճիտ։

Ազգեւելեան Մամուլ պաշտօնական դոյն ամսագիրը տասնեւչորս տարիներէ 'ի վեր կը հրատարակուի խմբագրութեամբ Ազգային Մեծայարգ դրագէտ Մ. Մամուրեանի։ Ամէն կարգի ինդիրներ հմուտ և կարգաւորեալ ոճով կը ներկայանան այն Հանդիսին միջոցաւ՝ բանասիրաց։

Տարեգինն է 4 մէճիտ, բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլիս համար Ծուխան համար Ն. Կ. Պէրպէրեանի տպագրատունը։

Արդեամբ Ասիական Ընկերութեան ԵՐԿՐԱԳՈՒՆԴ օգտակար հանդէսը կ'հրատարակուի երկու տարիներէ ի վեր ։ տարուոյ սկիզբէն Ազգային գրագէտներէն Եղիա էֆ. Տէմիրճիպաշեանի խմբագրութեամբ կհրատարակուի։

Նիւթոց առատութեան հետ հանդիսին գեղեցիկ կարգաւորութիւնը յոյժ գգալի է Եւրոպոյ ընթերցողաց։

Տարեգինն է Պոլսոյ համար 40 դ.հ. և դաւառաց համար 50 դ.հ։

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԱՐԱՄ ԱՇՃԷԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ
ՍԻՒՄՊԻԼԼԻԻ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ 35

ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՒ ՄԷԱՐԻՖԻ